ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)
2021 թվականի սեպտեմբերի 13-15-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Առնո Բաբաջանյանի հիշատակի տարածաշրջանային հասարակական հիմնադիրամ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Առնո Բաբաջյանի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Առնո Բաբաջանյանին նվիրված ցուցադրությունը 2022թ"-ին Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք հայ մշակույթի օրերի ծրագրի շրջանակներում կազմակերպելու հարցը

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Մասնակցել և ելույթով հանդես եմ եկել Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի Ռախմանինովի դահլիճում կայացած մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի 100-ամյակին նվիրված համերգին, որտեղ հայ և ռուս երաժիշտների կատարմամբ հնչել են Ա. Բաբաջանյանի դասական ստեղծագործությունները:

Հանդիպել եմ Երաժշտության ռուսական ազգային թանգարանի գործադիր տնօրեն Մ.Բոիզգալովի հետ: Քննարկվել են Առնո Բաբաջանյանին նվիրված ցուցադրության, 2022-ին Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք հայ մշակույթի օրերի կազմակերպման շրջանակներում հնարավոր միջոցառումները և թանգարանի բացառիկ հավաքածուները հայկական նվագարաններով համալրելու ծրագրերը:

Մոսկվայում այցելել եմ Ա.Բաբաջանյանի անվ. երաժշտական դպրոց, զրուցել տնօրենի հետ:

Այցելել եմ մեծանուն կոմպոզիտորի՝ Մ.Թարիվերդիևի բնակարան և ծանոթացել նրա այրու՝ Վերա Կոլոսովայի հետ: Նախարարի անունից հրավիրել եմ նրան ներկա լինելու կոմպոզիտորի հոբելյանին նվիրված միջոցառումներին: Քննարկել ենք նաև Թարիվերդիևի անվ. երգեհոնահարների միջազգային մրցույթը Հայաստանում կազմակերպելու հեռանկարները:

Մասնակցել եմ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի դեսպանատանը Ա. Բաբաջանյանին նվիրված համերգին:

- **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ա. Բաբաջանյանի հիշատակի հիմնադրամի կողմից արժանացել եմ Առնո Բաբաջանյանի հոբելյանական մեդալի:

- **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- Պայմանավորվածությունների հիման վրա մշակել համապատասխան ծրագրերը և ներառել 2022թ. Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի մշակույթի օրերի ծրագրում:
- Հանձնարարել պետական ֆիլհարմոնիայի տնօրենությանը կազմելու հայկական ժողովրդական նվագարանների՝ Ռուսական երաժշտական թանգարանում կազմակերպվող ծրագրի նախահաշիվը, աշխատանք տանել հովանավորչական միջոցներ ներգրավելու ուղղությամբ:
- Ուսումնասիրել Ռուսական թանգարանի տնօրենի ներկայացրած հայկական նվագարանների հավաքածուն և աշխատանք տանել այն համալրելու ուղղությամբ:

16.09.2021

Արայիկ Խզմալյան